

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արդարադատության ակադեմիա»

պետական ոչ առևտրային կազմակերպության

2018 թվականի գործունեության վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
II. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ	5
1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում.....	5
2. Մասնագիտական պատրաստում.....	8
III. ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ	10
1. Վերապատրաստում	10
2. Մասնագիտական պատրաստում.....	13
3. Հատուկ ուսուցում.....	15
IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ	17
1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում.....	17
2. Առարկայական ծրագրերի մշակում	19
3. Մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում.....	23
4. Առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ձեռնարկների) մշակում.....	24
5. Աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում.....	25
6. Ընթացիկ այլ աշխատանքներ.....	30
V. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ.....	31
1. Ընդհանուր տեղեկություններ	31
2. Հեռուսուցման դասընթացներ	32
3. Ընդհանրացված ամփոփում.....	34
VI. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ	35
VII. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ	40
1. Եկամուտներ.....	40
2. Ծախսեր	41
VIII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ	43

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ դատական օրենսգրքով, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) կանոնադրությամբ, Ակադեմիայի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով, այլ իրավական ակտերով և համագործակցության հուշագրերով ու համաձայնագրերով, Ակադեմիան հաշվետու ժամանակահատվածում իր գործունեության նպատակների և խնդիրների կենսագործման ուղղությամբ՝

- 1) կազմակերպել և անցկացրել է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների հավակնորդների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից), դատախազների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից) և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների համապատասխան ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
- 2) կազմակերպել և անցկացրել է դատավորների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից), դատախազների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից), ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի քննիչների վերապատրաստում.
- 3) կազմակերպել և անցկացրել է դատական ծառայողների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից), ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների, ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստում.

- 4) կազմակերպել է դատավորների, դատախազների, քննիչների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով.
- 5) կնքել է պայմանագրեր և արդյունավետորեն համագործակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց, միջազգային կազմակերպությունների հետ.
- 6) մշակել և շրջանառության մեջ է դրել ուսումնամեթոդական նյութեր՝ Օրենքով նախատեսված կրթական ծրագրերի իրականացման համար:

2018 թվականի ընթացքում գործունեության տարբեր բնագավառներում իրականացված բազմաթիվ միջոցառումներն ու ծրագրերը կոչված են եղել խթանելու Ակադեմիայի առաջընթացը, ապահովելու ուսումնական գործընթացի բարելավումն ու զարգացումը և ուսուցման որակի բարձրացումը:

Քայլեր են ձեռնարկվել նաև ժամանակակից նոր սարքավորումներ ձեռք բերելու, նյութատեխնիկական բազան, ենթակառուցվածքները բարելավելու, ինչպես նաև հասարակայնության հետ կապերը զարգացնելու, Ակադեմիայի վարկանիշն ու հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կատարվել են նաև բարեկարգման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ և այլն:

Ստորև հանգամանորեն ներկայացվում է Ակադեմիայի 2018 թվականի գործունեությունը՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և ոլորտների:

II. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- 1) դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստում.
- 2) դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
- 3) վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց մասնագիտական պատրաստում.
- 4) դատական ծառայողների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստում.
- 5) դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում.
- 6) դատավորների հատուկ ուսուցում:

1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում

• **Դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում:**
Խորհրդի 2017թ. սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/2 որոշմամբ հաստատված՝ «Դատավորների և Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում՝ 2 հատվածով, 15 խմբով: Խմբե-

րում ընդգրկվել է 19-35 դատավոր: Ծրագիրն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով: Հեռավար մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված դասընթացները կազմակերպվել են ուսուցման հեռավար, իսկ ընդհանուր և հարակից ու հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկվածները՝ առկա ուսուցման ձևով:

Ընդհանուր և հարակից մասնագիտական առարկաներով դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց չորս խումբ մասնակցել է վերապատրաստման դասընթացներին ապրիլի 03-ից 27-ը: Հատուկ մասնագիտական առարկաներով վերապատրաստումն իրականացվել է սեպտեմբերի 10-ից նոյեմբերի 23-ը:

Հայրով ներկայացվել է ընդամենը 265 ունկնդիր: Նրանցից վերապատրաստում են անցել 254-ը, որոնցից 225-ը՝ ՀՀ, 25-ը՝ ԱՀ դատավորներ, 4-ը՝ Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք:

• **Դատավորների հատուկ ուսուցում:** Խորհրդի 2017թ. սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/2 որոշմամբ հաստատված՝ «Դատավորների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա սեպտեմբերի 15-ին, մեկ խմբով, իրականացվել է դատավորների հատուկ ուսուցում: Դասընթացների տևողությունը կազմել է 6 ակադեմիական ժամ:

Հայրով ներկայացվել է 35 դատավոր, որոնցից հայրուկ ուսուցմանը մասնակցել են 13-ը:

• **Դատական ծառայողների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստում:** Խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/2 որոշմամբ հաստատված՝ «Դատական ծառայողների վերապատրաստման ուսուցման ծրագրի» և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի միջև 18.10.2018թ. կնքված պայմանագրի հիման վրա իրականացվել է դատական ծառայողների վերապատրաստում՝ 18 խմբով: Խմբերում ընդգրկվել է 4-36 դատական ծառայող: Վերապատրաստումն իրականացվել է 2 հատվածով՝ 1) փետրվարի 12-ից մայիսի 16-ը և 2) նոյեմբերի 05-ից 14-ը:

Ծրագիրն իրականացվել է առկա ուսուցման ձևով: Ունկնդիրները դասընթացի ավարտին հանձնել են քննություն:

Դատական ծառայողների ուսումնառության տևողությունը՝ իրավաբանական մասնագիտական գործառույթներ իրականացնող դատական ծառայողների համար կազմել է 30, ղեկավար պաշտոն զբաղեցնող դատական ծառայողների համար՝ 26, ուսուցման ծրագրի 6-8 կետերում նշված մասնագիտական գործառույթ իրականացնող դատական ծառայողների համար՝ 16, դատական նիստերի քարտուղարների համար՝ 12 և Դատական դեպարտամենտի այլ մասնագիտական գործառույթներ իրականացնող դատական ծառայողների համար՝ 6, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ 30 և 16 ակադեմիական ժամ:

Հայրով ներկայացվել է 349 դատական ծառայող, որից 23-ը՝ ԱՀ-ից, 20-ը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք:

Վերապատրաստում է անցել 295 դատական ծառայող, որոնցից 253-ը՝ ՀՀ դատական ծառայող, 22-ը՝ ԱՀ դատական ծառայող, և 20-ը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք:

• **Դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում:** Խորհրդի 2017 թ. սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/2 որոշմամբ հաստատված՝ «Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում՝ 30 ակադեմիական ժամ տևողությամբ, որից 20-ը կազմել է վերապատրաստման, իսկ 10-ը՝ հատուկ ուսուցման դասընթացների ժամաքանակը: Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացները կայացել են մայիսի 21-ից հուլիսի 26-ը: Դասընթացները կազմակերպվել են 10 խմբով, յուրաքանչյուրում՝ 25-27 դատական կարգադրիչներ: Ունկնդիրները դասընթացի ավարտին հանձնել են քննություն:

Հայրով ներկայացվել է 265 դատական կարգադրիչ:

Վերապատրաստում է անցել 247 դատական կարգադրիչ:

2. Մասնագիտական պատրաստում

• Խորհրդի 2018թ. հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/18/3 որոշմամբ հաստատված՝ «Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով» մասնագիտական պատրաստում է անցել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 10 անձ, (այդ թվում, 1-ը՝ ԱՀ-ից), որոնցից 5-ը՝ քաղաքացիական (այդ թվում, 1-ը՝ ԱՀ-ից) և 5-ը՝ քրեական մասնագիտացմամբ:

Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցումը սկսվել է 2018թ. փետրվարի 26-ից և ավարտվել նույն տարվա հոկտեմբերի 16-ին: Ուսումնառությունն անցկացվել է ուսուցման 4 հատվածով:

– **Քաղաքացիական մասնագիտացմամբ** ունկնդիրների ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1026 ակադեմիական ժամ, որից 280-ը կազմել է դասընթացների, 26-ը՝ քննաշրջանի, 720-ը՝ փորձաշրջանի ժամաքանակը:

– **Քրեական մասնագիտացմամբ** ունկնդիրների ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1026 ակադեմիական ժամ, որից 280-ը կազմել է դասընթացների, 26-ը՝ քննաշրջանի, 720-ը՝ փորձաշրջանի ժամաքանակը:

• Խորհրդի 2018թ. մարտի 16-ի թիվ ԿԽ-002/18 որոշմամբ հաստատված՝ «Վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2018 թվականի ցուցակում ընդգրկված՝ քրեական մասնագիտացման բաժնի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման ծրագրի» հիման վրա մասնագիտական պատրաստում է անցել **առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2018 թվականի ցուցակում ընդգրկված 3 անձ՝ քրեական մասնագիտացմամբ**: Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումը ներառել է փորձաշրջան ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում: Փորձաշրջանը սկսվել է 2018թ. մարտի 21-ին և ավարտվել 2018թ. ապրիլի 11-ին:

• Խորհրդի 2018թ. օգոստոսի 30-ի թիվ ԿԽ-006/18/2 որոշմամբ հաստատված՝ «Վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2018թ. ցուցակում ընդգրկված՝ քաղաքացիական մասնագիտացման բաժնի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման ծրագրի» հիման վրա մասնագիտական պատրաստում է անցել **առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2018թ. ցուցակում ընդգրկված 3 անձ՝ քաղաքացիական մասնագիտացմամբ**: Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումը ներառել է փորձաշրջան ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Փորձաշրջանը սկսվել է 2018 թ. սեպտեմբերի 24-ին և ավարտվել նույն թվականի նոյեմբերի 3-ին:

Բաժնի գործունեության վերաբերյալ ամփոփ ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում՝

Ուսուցման տեսակ	Հայտով ներկայացված	Ուսուցում անցած (%)
Մասնագիտական պատրաստում	16	16 (100,0%)
<i>Քաղաքացիական մասնագիտացում</i> <i>Այդ թվում՝</i>	5	5 (100,0%)
Արցախի Հանրապետությունից	1	1
Քրեական մասնագիտացում	5	5 (100,0%)
Գիտական աստիճանով թեկնածուներ <i>Այդ թվում՝</i>	6	6 (100,0%)
Քաղաքացիական մասնագիտացում	3	3
Քրեական մասնագիտացում	3	3
Վերապատրաստում	879	796 (90,6%)
Դատավորներ <i>Այդ թվում՝</i>	265	254 (95,8%)
Արցախի Հանրապետությունից	25	25
Ակադեմիան ավարտած թեկնածուներ	4	4
Դատական ծառայողներ <i>Այդ թվում՝</i>	349	295 (84,5%)
ՄԻՊ աշխատակազմից	20	20
Արցախի Հանրապետությունից	23	22
Դատական կարգադրիչներ	265	247 (93,2%)
Հատուկ ուսուցում	300	260 (86,7%)
Դատավորներ	35	13 (37,1%)
Դատական կարգադրիչներ	265	247 (93,2%)
Ընդամենը	1195	1072 (89,7%)

III. ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- 1) դատախազների տարեկան վերապատրաստում.
- 2) դատախազների լրացուցիչ վերապատրաստում.
- 3) ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստում.
- 4) ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստում.
- 5) ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի քննիչների վերապատրաստում.
- 6) ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստում.
- 7) ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստում.
- 8) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
- 9) ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
- 10) դատախազների հատուկ ուսուցում.
- 11) ՀՀ քննչական կոմիտեի քննիչների հատուկ ուսուցում.
- 12) ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների հատուկ ուսուցում:

1. Վերապատրաստում

• **Դատախազների վերապատրաստում:** Խորհրդի 2017թ. սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/3 որոշմամբ հաստատված՝ «Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների վերապատրաստումն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով: Ընդհանուր և հարակից մասնագիտա-

կան, ինչպես նաև հատուկ մասնագիտական դասընթացները կազմակերպվել են առկա ուսուցման ձևով:

Դատախազների ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների ուսումնառության ժամկետի տևողությունը, կազմել է 40-ական ակադեմիական ժամ:

Դասընթացները կազմակերպվել են հետևյալ ժամանակացույցին համապատասխան՝

- ա) ընդհանուր մասնագիտական դասընթացներ՝ 03.04–27.04.2018 թ.,
- բ) հատուկ մասնագիտական դասընթացներ՝ 10.09-07.12.2018 թ.,
- գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ՝ 10.03-24.03.2018 թ. և 10.11.2018 թ.:

Խմբերում ընդգրկվել է 2-30 դատախազ:

Հայրով ներկայացվել է 312 ՀՀ և 13 ԱՀ դատախազ: Վերապատրաստում անցել են 281 ՀՀ և 13 ԱՀ դատախազ: Լրացուցիչ վերապատրաստում անցել են՝ 14 ՀՀ դատախազ:

• **ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017 թ. դեկտեմբերի 8-ի թիվ 8 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 24 ակադեմիական ժամ, իսկ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների ուսումնառության ժամկետի տևողությունը՝ 30 ակադեմիական ժամ:

ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների դասընթացներն իրականացվել են 2 խմբով՝ 28.11-07.12.18 թ.:

ՀՀ քննչական կոմիտեի քննիչների դասընթացներն իրականացվել են 2 փուլով՝ 07.05-28.06.2018 թ. և 01.10-08.11.2018թ:

Խմբերում ընդգրկվել է 12-26 քննիչ:

Հայրով ներկայացվել է 267 քննիչ և 52 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչ:

Վերապատրաստում անցել է 232 քննիչ և 47 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչ:

• **ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստում:** ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 2017 թ. հոկտեմբերի 4-ի թիվ 20-Լ հրամանով հաստատված՝ «ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա ՀԲԾ քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով մեկ խմբով:

Հատուկ քննչական ծառայության քննիչների ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 30 ակադեմիական ժամ:

Վերապատրաստումն իրականացվել է 17.03-07.04.2018 թ.:

Հայրով ներկայացվել է 7, իսկ վերապատրաստում անցել է 4 քննիչ:

• **ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի քննիչների վերապատրաստում:** Արդարադատության ակադեմիայի և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության միջև 14.04.2017 թ. կնքված՝ «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության միջև համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի» հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչների ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 40 ակադեմիական ժամ:

Վերապատրաստումն իրականացվել է 05.11-09.11.2018 թ., 12.11-16.11.2018թ.:

Հայրով ներկայացվել է 7, իսկ վերապատրաստում անցել է 5 քննիչ:

• **Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստում:** Խորհրդի 2017 թ. սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/3 որոշմամբ հաստատված՝ «Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա վերապատրաստումն իրականացվել է

առկա ուսուցման ձևով՝ 4 խմբով, և ավարտվել վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

Խմբերում ընդգրկվել է 20-24 պետական ծառայող:

Վերապատրաստումն իրականացվել է 12.02-07.03.2018 թ.:

Հայրով ներկայացվել է դադարախազության աշխատակազմում 90 պետական ծառայող, որոնցից վերապատրաստում անցել է 87-ը:

• **ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017 թ. դեկտեմբերի 8-ի թիվ 8 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստման» ուսուցման ծրագրի հիման վրա վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով՝ 3 խմբով, և ավարտվել վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

Խմբերում ընդգրկվել է 16-18 պետական ծառայող:

Վերապատրաստումն իրականացվել է 05.11-22.11.2018 թ.:

Հայրով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի 55 պետական ծառայող, որոնցից վերապատրաստում անցել է 50-ը:

2. Մասնագիտական պատրաստում

• **Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:** Խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 13-ի թիվ ԿԽ-007/17 որոշմամբ հաստատված՝ «Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսումնառությունն անցկացվել է 4 հատվածով: Ուսումնառության ժամկետի տևողությունը՝ համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1070 ակադեմիական ժամ, որից 300-ը կազմել է դասընթացների, 30-ը՝ քննաշրջանի, 720-ը՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 1 խմբով՝ 26.02- 16.10.2017թ.:

Ուսումնառությանը մասնակցել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 16 անձ (այդ թվում, 1-ը՝ ԱՀ-ից): Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանցից երկուսը ՀՀ գլխավոր դատախազի 25.05.2018 թ. թիվ 100-Ա և 26.06.2018 թ. թիվ 132-Ա հրամաններով հանվել են դատախազների թեկնածությունների ցուցակից:

Հայրով ներկայացվել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 16 անձ, որոնցից մասնագիտական պատրաստումն ավարտել է 14 անձ, որոնցից 1-ը՝ ԱՀ-ից:

• **ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017թ. դեկտեմբերի 8-ի թիվ 8 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսումնառությունն անցկացվել է 4 հատվածով: Ուսումնառության ժամկետի տևողությունը՝ համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 268 ակադեմիական ժամ, որից 250-ը՝ դասընթացները, 18-ը՝ քննաշրջանը, ինչպես նաև 3 ամիս փորձաշրջանը:

Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 2 խմբով, առաջինը՝ 19.02-25.09.2018թ., երկրորդը՝ 03.04-06.11.2018 թ.:

Ուսումնառությանը մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 60 անձ (1-ին խումբ՝ 27, 2-րդ խումբ՝ 33 ունկնդիր):

ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանցից 3-ը՝ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 25.09.2018 թ. թիվ 6, թիվ 7 և թիվ 8 որոշումներով, հանվել են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակից:

Հայրով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 60 անձ, որոնցից մասնագիտական պատրաստումն ավարտել է 57-ը՝ (1-ին խումբ՝ 27, 2-րդ խումբ՝ 30):

3. Հատուկ ուսուցում

• **Դատախազների հատուկ ուսուցում:** Խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ ԿԽ-005/17/3 որոշմամբ հաստատված՝ «Դատախազների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են 3 խմբով՝ 6 ակադեմիական ժամ տևողությամբ՝ 20.10.2018 թ., 27.10.2018 թ. և 03.11.2018 թ.:

Հայրով ներկայացվել է 80 դատախազ, որոնցից հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել է 55-ը:

• **ՀՀ քննչական կոմիտեի քննիչների հատուկ ուսուցում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 8 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են 3 խմբով՝ 10 ակադեմիական ժամ տևողությամբ՝ 30.06.2018 թ., 07.07.2018 թ. և 14.07.2018 թ.:

Հայրով ներկայացվել է 94 քննիչ, որոնցից հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել է 74-ը:

• **ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների հատուկ ուսուցում:** ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 2017 թ. հոկտեմբերի 4-ի թիվ 20-Լ հրամանով հաստատված՝ «ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա դասընթացն անցկացվել է 2 խմբով՝ 10 ակադեմիական ժամ տևողությամբ 30.06.2018 թ., 03.11.2018 թ.:

Հայրով ներկայացվել է 7 քննիչ: Հատուկ ուսուցում անցել է 4 քննիչ:

Բաժնի գործունեության վերաբերյալ ամփոփ ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում՝

Ուսուցման տեսակ	Հայտով ներկայացված	Ուսուցում անցած (%)
Մասնագիտական պատրաստում	76	71 (93,4%)
<i>Դարախազի թեկնածուներ</i>	<i>16</i>	<i>14 (87,5%)</i>
<i>Այդ թվում՝</i>		
<i>Արցախի Հանրապետությունից</i>	<i>1</i>	<i>1</i>
ՔԿ ծառայողի թեկնածուներ	60	57 (95,0%)
Վերապատրաստում	803	719 (89,5%)
<i>Դարախազներ</i>	<i>325</i>	<i>294 (90,5%)</i>
<i>Այդ թվում՝</i>		
<i>Արցախի Հանրապետությունից</i>	<i>13</i>	<i>13</i>
<i>Դարախազության աշխատակազմում պետական ծառայողներ</i>	<i>90</i>	<i>87 (96,7%)</i>
<i>ՀՀ ՔԿ ղեկավար կազմ</i>	<i>52</i>	<i>47 (90,4%)</i>
<i>ՀՀ ՔԿ քննիչներ</i>	<i>267</i>	<i>232 (86,9%)</i>
<i>ՀՀ ՔԿ դեպարտամենտի պետական ծառայողներ</i>	<i>55</i>	<i>50 (90,9%)</i>
<i>ՀՀ ՀՔԾ քննիչներ</i>	<i>7</i>	<i>4 (57,1%)</i>
<i>ՀՀ ԱԱԾ ՔԴ քննիչներ</i>	<i>7</i>	<i>5 (71,4%)</i>
Լրացուցիչ վերապատրաստում	14	14 (100,0%)
<i>Դարախազներ</i>	<i>14</i>	<i>14 (100,0%)</i>
Հատուկ ուսուցում	181	133 (73,5%)
<i>Դարախազներ</i>	<i>80</i>	<i>55 (68,8%)</i>
<i>ՀՀ ՔԿ քննիչներ</i>	<i>94</i>	<i>74 (78,7%)</i>
<i>ՀՀ ՀՔԾ քննիչներ</i>	<i>7</i>	<i>4 (57,1%)</i>
Ընդամենը	1074	937 (87,2%)

IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- 1) մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում,
- 2) առարկայական ծրագրերի մշակում (դասավանդողների հետ համատեղ),
- 3) մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցերի մշակում,
- 4) առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ծեռնարկների) մշակում,
- 5) աշխատաժողովների, հրավիրյալ դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում, նյութերի մշակում,
- 6) ընթացիկ այլ աշխատանքներ:

1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են մասնագիտական պատրաստման 3, վերապատրաստման 10 և հատուկ ուսուցման 5 (ընդհանուր առմամբ՝ 17¹) հետևյալ տարեկան ուսուցման ծրագրերի նախագծերը՝

- ✓ ԱՀ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2018թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ ԱՀ դատավորների վերապատրաստման 2018թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ ԱՀ դատական ծառայողների վերապատրաստման 2018թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2018թ. տարեկան ուսուցման ծրագիր,

¹ Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրի նախագիծը ներկայացվել է մեկ ակտի տեսքով:

- ✓ Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ Դատավորների հատուկ ուսուցման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ Դատական ծառայողների վերապատրաստման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ Դատախազների վերապատրաստման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ Դատախազությունում պետական ծառայողների վերապատրաստման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ Դատախազների հատուկ ուսուցման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների հատուկ ուսուցման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) վերապատրաստման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) հատուկ ուսուցման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստման 2019թ. տարեկան ուսուցման ծրագիր:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է նաև դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված իրավաբան գիտնականների գործնական հմտությունների զարգացման մասով 2 ուսուցման ծրագրի նախագծեր:

Ուսուցման նշված ծրագրերի նախագծերը մշակելիս հիմք են ընդունվել ներպետական և միջազգային մի շարք իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև հաշվի են առնվել շահագրգիռ գերատեսչությունների կողմից «Արդարադատության

ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունները:

2. Առարկայական ծրագրերի մշակում

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատված՝ 2018թ. տարեկան ծրագրերով սահմանված առարկայացանկի և կրթական չափորոշիչների հիման վրա Գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժինը առարկայական կուրսերի դասավանդողների հետ համատեղ իրականացրել է ընդհանուր առմամբ **180 առարկայական ծրագրերի մշակման կամ վերամշակման** աշխատանքներ: Վերամշակված առարկայական ծրագրերի հիմքում դրվել են նախորդ տարիներին մշակված ծրագրերը: Առարկայական ծրագրերը մշակելիս (վերամշակելիս) հիմք են ընդունվել իրավունքի ոլորտում առկա զարգացումները, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական նոր դիրքորոշումները, ինչպես նաև հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումները և իրավակիրառ պրակտիկայում առկա առավել խնդրահարույց հարցերը: Այդ կապակցությամբ իրականացվել է համապատասխան ոլորտի բազմակողմանի ուսումնասիրություն՝ նշված ծրագրերն Ակադեմիայի գործունեության նպատակներին և ունկնդիրների պահանջներին առավելագույնս համապատասխանեցնելու համար:

Ա) Մասնագիտական պատրաստման ծրագրեր.

Հաշվետու ժամանակահատվածում **մշակվել են** դատավորների, դատախազների, քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման տարեկան ծրագրերում ներառված **12** և **վերամշակվել՝ 48** առարկայական ծրագրեր: Մասնավորապես՝

• **Դատավորների 2018թ. թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց** մասնագիտական պատրաստման 30 առարկայական ծրագրերից վերամշակվել են 20-ը: Մշակվել են հետևյալ 10 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) JC-G-028-18 – Համակարգչային հմտություններ,

- 2) JC-C-008-18 – ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցեր,
- 3) JC-C-009-18 – ՀՀ ժառանգական իրավունքի արդի հարցեր,
- 4) JC-C-010-18 – ՀՀ ընտանեկան իրավունքի արդի հարցեր,
- 5) JC-C-017-18 – ՀՀ սեփականության իրավունքի արդի հարցեր,
- 6) JC-C-031-18 – Իրավական օգնության և առևտրային արբիտրաժների ակտերի ճանաչման ու կատարման վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրներ,
- 7) JC-C-032-18 – Հատուկ վարույթի գործերով քննության առանձնահատկությունները,
- 8) JC-Q-054-18 – Իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները քրեական գործերով,
- 9) JC-Q-056-18 – Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր,
- 10) JC-Q-070-18 – Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները:

• Դատախազների 2018 թվականի թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 18 առարկայական ծրագրերից վերամշակվել են 15-ը: Մշակվել են հետևյալ 3 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) PC-G-028-18 – Համակարգչային հմտություններ,
- 2) PC-Q-039-18 – Կոռուպցիոն հանցագործությունների որակումը և քննության մեթոդիկան,
- 3) PC-Q-056-18 – Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր:

• Քննիչների 2018թ. թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 12 առարկայական ծրագրերն էլ վերամշակվել են:

Բ) Վերապատրաստման ծրագրեր.

Հաշվետու ժամանակահատվածում **մշակվել են** վերապատրաստումների տարեկան ծրագրերում ներառված **33** և **վերամշակվել՝ 45** առարկայական ծրագրեր: Մասնավորապես՝

• **Դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց** տարեկան վերապատրաստման 36 առարկայական ծրագրերից վերամշակվել են 25-ը: Մշակվել են հետևյալ 11 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) J-J-005-18 – Դատավորի մասնագիտական էթիկա և գործունեության գնահատում,
- 2) J-J-014-18 – Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր,
- 3) J-C-001-18 – Պարտավորական հարաբերությունների արդի հիմնահարցեր,
- 4) J-C-003-18 – Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր,
- 5) J-C-008-18 – Աշխատանքային իրավունքի արդի հարցեր,
- 6) J-C-031-18 – Իրավական օգնության և առևտրային արբիտրաժների ակտերի ճանաչման ու կատարման վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրներ,
- 7) J-C-033-18 – Հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրներ,
- 8) J-A-001-18 – Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր,
- 9) J-A-016-18 – Հատուկ վարույթի գործերով քննության առանձնահատկություններ,
- 10) J-Q-053-18 - Պատժի կատարման փուլի նկատմամբ դատական վերահսկողության առանձնահատկությունները,
- 11) J-Q-054-18 - Իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները քրեական գործերով:

• **Դատախազների** տարեկան վերապատրաստման 20 առարկայական ծրագրերից վերամշակվել են 12-ը: Մշակվել են հետևյալ 8 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) P-J-004-18 – Իրավաբանական գիր և մեկնաբանում,
- 2) P-Q-057-18 – Քրեական գործերով քննության բնագավառում միջազգային համագործակցություն,
- 3) P-Q-017-18 – Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա,
- 4) P-Q-019-18 – Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության, պրոբացիայի նկատմամբ,

- 5) P-Q-059-18 – Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր,
- 6) P-J-013-18 – Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր,
- 7) P-J-008-18 – Դատախազի վարքագծի կանոններ,
- 8) P-Q-056-18 – Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր:

• **ՀՀ քննչական կոմիտեի քննիչների տարեկան վերապատրաստման 22 առարկայական ծրագրերից վերամշակվել են 8-ը: Մշակվել են հետևյալ 14 նոր առարկայական ծրագրերը՝**

- 1) I-G-006-18 – Ժամանակի կառավարում,
- 2) I-G-001-18 – Հաղորդակցության և բանակցության հմտություններ,
- 3) I-J-009-18 – Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները,
- 4) I-Q-028-18 – Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնադրային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները,
- 5) I-Q-030-18 – Կիրեռհանցագործությունների քննության առանձնահատկությունները,
- 6) I-Q-061-18 – Հանցագործության փուլերի որակման հիմնահարցեր,
- 7) I-Q-062-18 – Քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ վարույթն ավարտելու հիմնախնդիրներ,
- 8) I-Q-063-18 – Քննչական ենթակայության հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում,
- 9) I-Q-064-18 – Քրեագիտական վարկած և քննության պլանավորում,
- 10) I-Q-065-18 – Դեպքի վայրի զննության տակտիկա,
- 11) I-Q-066-18 – Հարցաքննության տակտիկական մեթոդներն ու առանձնահատկությունները,
- 12) I-Q-067-18 – Սպանությունների քննության առանձնահատկությունները,
- 13) I-Q-068-18 – Բնակարանային գողության քննության մեթոդիկա,
- 14) I-Q-069-18 – Թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր ձեռք բերելու, պահելու, իրացնելու քննության առանձնահատկությունները:

Մշակվել կամ վերամշակվել են նաև՝

- **դատավորների, դատախազների, քննիչների** հատուկ ուսուցման ծրագրերով նախատեսված թվով 3 առարկայական ծրագրերը,
- **դատական ծառայողների** (ներառյալ՝ ՄԻՊ աշխատակազմի) տարեկան վերապատրաստման թվով 22 առարկայական ծրագրերը,
- **դատական կարգադրիչների** տարեկան վերապատրաստման և հատուկ ուսուցման թվով 4 առարկայական ծրագրերը,
- **դատախազության աշխատակազմում պետական ծառայողների** տարեկան վերապատրաստման թվով 4 առարկայական ծրագրերը,
- **ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների** տարեկան վերապատրաստման թվով 4 առարկայական ծրագրերը,
- **ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների** տարեկան վերապատրաստման թվով 5 առարկայական ծրագրերը:

3. Մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում

Դատավորիների, դատախազների, քննիչների թեկնածությունների 2017թ. ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման արդյունքների գնահատման համար իրականացվել է մասնագիտական պատրաստման ծրագրերում ներառված առարկայական կուրսերի (դասընթացների) քննական նյութի կազմում, մշակում կամ վերամշակում, յուրաքանչյուր քննական հանձնարարության համար գնահատման չափանիշների մշակում, քննական առաջադրանքների տիպային պատասխանների մշակում:

Մասնավորապես, մշակվել են՝

- ✓ քննական խնդիրներ,
- ✓ գրավոր քննության հարցաշարեր,
- ✓ թեստային առաջադրանքներ,
- ✓ բանավոր քննությունների քննական հարցաշարեր և հարցատոմսեր,
- ✓ քննական առաջադրանքների պատասխանների ուղեցույցներ:

Յուրաքանչյուր քննական նյութի առանձնահատկություններին և առաջադրանքների քանակին համապատասխան մշակվել են գնահատման չափանիշներ:

Ընդհանուր առմամբ իրականացվել է՝

- ✓ 30 դասընթացի քննական նյութի կազմում, մշակում կամ վերամշակում դատավորների թեկնածությունների 2018թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար,
- ✓ 18 դասընթացի քննական նյութի կազմում, մշակում կամ վերամշակում դատախազների թեկնածությունների 2018թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար,
- ✓ 12 դասընթացի քննական նյութի կազմում, մշակում կամ վերամշակում քննիչների թեկնածությունների 2018թ. ցուցակներում ընդգրկված անձանց յուրաքանչյուր խմբի քննությունների համար (2 խումբ):

4. Առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ծեռնարկների) մշակում

• Եվրոպական միության աջակցությամբ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում՝ մշակվել է «Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները» թեմայով առարկայական դասընթացը և այդ դասընթացի ուսումնամեթոդական ապահովման համար նախատեսված համանուն վերտառությամբ ծեռնարկը:

• Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարը և կանխարգելումը ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում մշակվել է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարը և կանխարգելումը ՀՀ-ում» թեմայով նոր առարկայական դասընթացը և դրա ուսումնամեթոդական ապահովումն իրականացնելու համար նախատեսված համապատասխան ծեռնարկը:

• ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության «Քրեական արդարադատության բարեփոխումների» ծրագրի շրջանակում Արդարադատության ակադեմիայում դասավանդելու համար մշակվել են առարկայական նոր դասընթացներ հետևյալ թեմաներով՝

- ✓ «Կոռուպցիոն դեպքերի քննությունը»,

- ✓ «Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը»,
- ✓ «Ներքին ուսումնասիրություններ (քննություն)»,
- ✓ «Կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ»,
- ✓ «Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը»,
- ✓ «Անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը»,
- ✓ «Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը»,
- ✓ «Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը»,
- ✓ «Դատական իշխանության անկախություն և թափանցիկություն»:

Վերը նշված դասընթացները ներդրվել են Ակադեմիայի 2019թ. տարեկան ուսուցման ծրագրերում, որոնց դասավանդումը կազմակերպելու նպատակով մի քանի փուլով իրականացվել են վերապատրաստողների վերապատրաստման դասընթացներ:

5. Աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում

- 2018 թ. փետրվարի 5-ից 10-ը **Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների, Արդարադատության ակադեմիայի աշխատակազմի ներկայացուցիչների, ինչպես նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողների** համար կազմակերպվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի հիմնական նորամուծությունները թեմայով հրավիրյալ դասախոսություն, որը վարել են Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) դատարանի դատավորներ Արմեն Թումանյանը և Դենիս Կոլոսը:

- 2018 թվականի մարտի 2-ին «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի շրջանակում **Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)** հետ համատեղ **դադարավորների և դադարավորի թեկնածուների** մասնակցությամբ իրականացվել է դատական ակտերի

կազմման հմտություններին նվիրված սեմինար, որը վարել է Գերմանիայից ժամանած փորձագետ Ռոլֆ Քնիպերը:

• 2018 թվականի մարտի 12-ին **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (ԹՊԻՀ)** հետ համատեղ **ՀՀ առաջին արյանի ընդհանուր իրավասության, Վերաքննիչ և Վճարելի դատարանների դատավորների, ՀՀ դատախազության դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննիչների, ՀՀ Կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի, ՀՀ ոստիկանության, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցիչներ** մասնակցությամբ իրականացվել է կազմակերպված հանցավորության դեմ պայքարին նվիրված եռօրյա սեմինար, որը վարել է **ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի ներկայացուցիչ** Ջո Վիթլին:

• 2018 թվականի մարտի 15-ին **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության** հետ համատեղ **Արդարադատության ակադեմիայի, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ դատական դեպարտամենտի աշխատակազմերի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների** մասնակցությամբ անցկացվել է կազմակերպական հոգեբանության ներածություն թեմայով սեմինար, որը վարել է **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրանյութերի դեմ պայքարի և իրավապահ հարցերով միջազգային բյուրոյի տնօրեն**, դոկտոր Շենոն Բեհայը:

• 2018 թվականի ապրիլի 14-ին և 15-ին **Ծաղկածորում** «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» **Եվրոպայի Խորհրդի** ծրագրի հետ համատեղ **ՀՀ առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական գործեր քննող 31 դատավորի** մասնակցությամբ իրականացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքին նվիրված կլոր սեղան-քննարկում:

• 2018 թվականի մայիսի 15-ին **ՀՀ փարբեր արյանների դատարանների դատավորների, ՀՀ դատախազության դատախազների** համար կազմակերպվել է սեմինար՝ նվիրված **փորձագիտական ապացույցները քրեական դատավարությունում թեմային**, որը վարել են **ԱՄՆ գլխավոր դատախազության Նյու Յորք և Մերիլենդ նահանգների դատախազներ** Ռոբերտ Թեյլորը և Քրիստեն Բիտետոն:

• 2018 թվականի մայիսի 19-ից 20-ը **Եվրոպայի խորհրդի** հետ համատեղ «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակում **Ծաղկածորում** ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական գործեր քննող 27 դատավորի համար **իրականացվել է** կլոր սեղան-քննարկում՝ նվիրված **ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքին:**

• 2018 թվականի հունիսի 1-ին **Եվրոպայի խորհրդի** հետ համատեղ «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակում դատական ծառայող՝ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական գործեր քննող դատավորների օգնականների մասնակցությամբ անցկացվել է սեմինար-քննարկում՝ նվիրված **ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքին:**

• 2018 թվականի հունիսի 28-ին **Եվրոպայի խորհրդի** հետ համատեղ «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակում դատավորների օգնականների մասնակցությամբ անցկացվել է սեմինար-քննարկում՝ նվիրված **ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքին:**

• 2018 թվականի հունիսի 29-ին **Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)** հետ համատեղ **ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի և ՀՀ վարչական դատարանի դատավորների մասնակցությամբ** անցկացվել է Դատական ակտի կազմման հմտություններ թեմայով սեմինար, որը վարել են **գերմանացի փորձագետներ՝ Գերմանիայի վարչական դաշնային դատարանի դատավոր, պալատի նախագահ դոկտոր Ռյուդիգեր Ռուբեյլը և Հեսեն երկրամասի Գերագույն վարչական դատարանի պաշտոնաթող նախագահ Վոլֆգանգ Ռայմերսը:**

• 2018 թվականի հուլիսի 12-ին **գործող դատավորների, դատախազների, քննիչների, դատավորի, դատախազի, քննիչի թեկնածուների, ինչպես նաև Ակադեմիայի դասընթացավարների** համար կազմակերպվել է հրավիրյալ դասախոսություն **մաֆիայի սոցիոլոգիա** թեմայով, որը վարել է **Աբու Դաբիում Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր** Գեորգի Դերլուզյանը:

• 2018 թվականի հուլիսի 12-ից 13-ը **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության հետ համագործակցության շրջանակում դատավորների և դատախազների մասնակցությամբ** անցկացվել է մտավոր սեփականության իրավունքի իրագործմանը նվիրված վերապատրաստում, որը վարել են **ԱՄՆ ներքին անվտանգության դեսպարտամենտի պե-**

դական անվտանգության հեղափոխությունների բաժնի մրավոր սեփականության կենտրոնի ազգային ծրագրի կառավարիչ Հեդեր Սայքսը, **նույն դեպարտամենտի հարուկ գործակալ** Աարոն Մոգիլնին և **նախկին աշխատակից** Վիկտոր Վարդանյանը:

• 2018 թվականի հուլիսի 14-ից 15-ը **Ծաղկածորում Եվրոպայի Խորհրդի** հետ համատեղ՝ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի շրջանակում անցկացվել է մարդու իրավունքների ոլորտում դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ **Արդարադատության ակադեմիայի դասընթացավարների վերապատրաստում:**

• 2018 թվականի սեպտեմբերի 11-ին **Եվրոպայի Խորհրդի գրասենյակի հեղ համարեղ** անցկացվել է **Բռնություն կանանց նկատմամբ և ընտանեկան բռնություն թեմայով Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) HELP ծրագրի (Մարդու իրավունքների կրթություն իրավական ոլորտի մասնագետների համար)** դասընթացի մեկնարկային հանդիպումը:

• 2018 թվականի սեպտեմբերի 20-ին **Ծաղկածորում** Արդարադատության ակադեմիայի, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականության մշակմանը մասնակից իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների, դատախազների, փողերի լվացման և նախորդող հանցագործություններ քննող քննիչների, հետաքննիչների, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների մասնակցությամբ անցկացվել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի և քրեական հետապնդում իրականացնող մարմինների համագործակցությունը. ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված գույքի բռնագանձմանն առնչվող որոշ դրույթների իմպլեմենտացումը թեմայով **խորհրդածողով:**

• 2018 թվականի սեպտեմբերի 22-ին և 23-ին **Ծաղկածորում Եվրոպայի Խորհրդի** հետ համատեղ՝ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի շրջանակում անցկացվել է մարդու իրավունքների ոլորտում

դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ **Արդարադատության ակադեմիայի դասընթացավարների վերապարաստում:**

• 2018 թվականի սեպտեմբերի 24-ին և սեպտեմբերի 25-ին **Եվրոպայի խորհրդի** հետ համատեղ՝ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի շրջանակում **քրեական մասնագիտացմամբ դատավորների համար** իրականացվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների որոշակի ասպեկտների վերաբերյալ սեմինար:

• 2018 թվականի հոկտեմբերի 2-ին **ԱՄՆ պետական դեսպարամենտի և Ամերիկյան խորհուրդների ֆինանսավորմամբ և աջակցությամբ՝ Professional Fellows Program ծրագրի շրջանակում** քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների մասնակցությամբ անցկացվել է **հաշտարարություն (մեդիացիա). դատարաններին կից գործող հաշտարարության առանձնահատկությունները և դատարանների դերը հաշտարարության զարգացման գործընթացում** թեմայով իրավիրյալ դասախոսություն:

• 2018 թվականի հոկտեմբերի 5-ին **Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)** հետ համատեղ՝ GIZ «**Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում**» ծրագրի շրջանակում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի, ՀՀ վերաքննիչ վարչական, ՀՀ վարչական դատարանների դատավորների մասնակցությամբ անցկացվել է «**Դատական ակտի կազմման հմտություններ՝ ըստ հայցարեւակների**» թեմայով սեմինար:

• 2018 թվականի հոկտեմբերի 26-ին **Հայաստանի Հանրապետության դատախազության, հարուկ քննչական ծառայության, քննչական կոմիտեի և ոստիկանության ներկայացուցիչների** մասնակցությամբ անցկացվել է կլոր սեղան-քննարկում՝ «**Ընտրական հանցագործությունների որակումը և քննության առանձնահատկությունները**» թեմայով, որը վարել են **ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ** Հ.Ենգոյանը և **ԵՊՀ դասախոս**, ՀՀ ՀԲԾ իրավական ապահովման բաժնի **ղեկավար** Ս.Գալյանը:

• 2018 թվականի հոկտեմբերի 31-ին կազմակերպվել է աշխատաժողով, որտեղ ներկայացվել է «Վատ վերաբերմունքի արգելք» **Եվրոպայի խորհրդի** HELP ծրագրի

(Մարդու իրավունքների կրթություն իրավական ոլորտի մասնագետների համար) առցանց ուսուցման դասընթացի ներածական հանդիպումը:

- 2018 թվականի նոյեմբերի 10-ից 11-ը **Եվրոպայի խորհրդի** հետ համատեղ անցկացվել է **Արդարադատության ակադեմիայի դասընթացավարների** երկօրյա **վերապատրաստում**, որին մասնակցում էին այն դասընթացավարները, ովքեր դասավանդելու են Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը նոր մշակված դասընթացը:

- ԵԽ/ԵՄ Արևելյան գործընկերության 2015-2018 թվականների ծրագրային համագործակցության կառուցակարգի մաս կազմող **«Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի** շրջանակներում իրավական ոլորտի մասնագետների համար իրականացվել է «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար» և «Վատ վերաբերմունքի արգելքը» Եվրոպայի խորհրդի (ԵԽ) HELP ծրագրերի (Մարդու իրավունքների կրթություն իրավական ոլորտի մասնագետների համար) **հեռավար դասընթացների** ադապտացում տեղական իրավական համակարգին:

6. Ընթացիկ այլ աշխատանքներ

Բաժինն իրականացրել է նաև ընթացիկ այլ աշխատանքներ: Մասնավորապես՝

- Ակադեմիայի ներքին ակտերի, գրությունների, այլ փաստաթղթերի նախագծերի կազմում,

- Ակադեմիայի գրադարանի գրքային ֆոնդի գույքագրման, ավելացման, սպասարկման բարելավման համակարգում,

- Ակադեմիայի առջև դրված խնդիրների կենսագործման, Ակադեմիայի բնականորեն գործունեության ապահովման, ինչպես նաև՝ ի պատասխան Արդարադատության ակադեմիային ուղղված գրությունների, հարցումների, այլ փաստաթղթերի կազմման և այլ ընթացիկ աշխատանքներ:

Վ. ՀԵՌԱՌՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- 1) հեռաուսուցման դասընթացների մշակում և իրականացում,
- 2) տարաբնույթ փորձարարական նորարարական թվային լուծումների մշակում,
- 3) ունկնդիրների կողմից հեռաուսուցման դասընթացների էլեկտրոնային գնահատման ապահովում,
- 4) միջազգային համագործակցության ձևավորում և զարգացում:

1. Ընդհանուր տեղեկություններ

• Դեպարտամենտի և հրավիրված մասնագետների համատեղ ջանքերով հեռաուսուցման փաթեթների պատրաստման արևմտյան դասական մոդելների հիման վրա մշակվել է «Փախստականների իրավունք» հեռաուսուցման դասընթացը՝ քրեական գործեր քննող դատավորների և դատախազների համար:

• Նախաձեռնվել և իրականացվել է ունկնդիրների կողմից հեռաուսուցման դասընթացների էլեկտրոնային գնահատում:

• Ակտիվ գործունեություն է ծավալվել միջազգային համագործակցության ոլորտում. քայլեր են ձեռնարկվել հետևյալ կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ հեռաուսուցման ոլորտում կապեր ձևավորելու և զարգացնելու ուղղությամբ՝

- ✓ *ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակազմի (UNHCR) գրասենյակ,*
- ✓ *Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների կրթություն իրավական ոլորտի մասնագետների համար»՝ HELP (Human Rights Education fo Legal Professionals) ծրագիր,*
- ✓ *Բելառուսի պետական համալսարանի դատավորների, դատախազության, դատարանների և արդարադատության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման ինստիտուտ,*

- ✓ *Սոլոդովայի Հանրապետության արդարադատության ազգային ինստիտուտ:*

2. Հեռուսուցման դասընթացներ

2018 թվականի սեպտեմբերի 18-ից նոյեմբերի 28-ը կազմակերպվել և իրականացվել են հեռուսուցման հետևյալ դասընթացները՝

- ✓ **«Փաստարկում և հռետորիկա»**,
- ✓ **«Փախստականների իրավունք»**,
- ✓ **«Անչափահասի իրավունքների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում»**,
- ✓ **«Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն»**:

Վերը նշված դասընթացներին մասնակցության հայտ են ներկայացրել ընդհանուր առմամբ 340 դատավորներ և դատախազներ, որոնք կոնկրետ դասընթացի շրջանակներում ապահովվել են մասնակցություն՝ պատասխանելով ինքնաստուգիչ հարցերի:

Յուրաքանչյուր դասընթացի տևողությունը 10 շաբաթ էր: Մասնակցելով նշված դասընթացներից յուրաքանչյուրին՝ ունկնդիրները հնարավորություն են ունեցել անցնել 40 ակադեմիական ժամին համարժեք վերապատրաստում:

• **«Փաստարկում և հռետորիկա»** դասընթացին մասնակցելու համար **հայտագրվել են 94** դատավորներ և դատախազներ:

Դասընթացին փաստացի մասնակցել են **45 դատավոր և 49 դատախազ:**

Դատավորներից 44-ը ապահովվել են 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն, **իսկ 1-ը՝** 36 ժամ:

Բոլոր դատախազները ապահովվել են 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Արդյունքում, տվյալ դասընթացին 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն են ապահովել **դատավորների և դատախազների 98%-ը:**

Դատավորներից 8-ը, իսկ **դատախազներից 9-ը** ապահովվել են **100%-անոց** արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին: **30 դատավոր և 21 դատախազ** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **90-100%-ին**, իսկ **1**

դարավոր և **3 դարախազ** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **50%-ից պակասին**:

• «**Փախստականների իրավունք**» դասընթացին մասնակցելու համար **հայրագրվել են** 39 դատավոր և 21 դատախազ, որոնցից **38 դարավոր** և **20 դարախազ** ապահովել են 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն: **Մեկ դարավոր** ապահովել է **36 ժամ** մասնակցություն, իսկ մեկ դատախազ՝ **0 ժամ**: Ոչ մի դատավոր և դատախազ **չի կարողացել ապահովել 100%-ոց** արդյունք: **14 դարավոր** և **3 դարախազ** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **90-100%-ին**, իսկ **5 դարավոր** և **2 դարախազ** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **50%-ից պակասին**:

• «**Անչափահասի իրավունքների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում**» դասընթացին մասնակցելու համար **հայրագրվել են** 21 դատավոր և 57 դատախազ: **Դարավորներից 20-ը** ապահովել են 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն, իսկ **դարախազներից՝ 55-ը**:

Մեկ դարավոր և 2 դատախազ ապահովել են **36 ժամ** մասնակցություն: **Երկու դարավոր** և **մեկ դարախազ** ապահովել են 100%-ոց արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին: **10 դարավոր** և **16 դարախազ** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **90-100%-ին**: Ինքնաստուգիչ հարցերի **50%-ից պակասին** ճիշտ է պատասխանել 2 դատախազ:

• «**Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն**» դասընթացին մասնակցելու համար **հայրագրվել են** 25 դատավոր և 83 դատախազ:

Բոլոր դարավորները ապահովել են 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն, իսկ **դարախազներից՝ 78-ը**:

Հինգ դատախազ ապահովել է **36 ժամ** մասնակցություն: **Երեք դատախազ** ապահովել է **100%-ոց** արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին: **17 դատավոր** և **43 դատախազ** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **90-100%-ին**: **1 դատավոր** և **7 դատախազ** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **50%-ից պակասին**:

3. Ընդհանրացված ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում «Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն», «Փախստականների իրավունք», «Փաստարկում և հոետորիկա», «Անչափահասի պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում» հեռաուսուցման դասընթացների շրջանակներում **վերապատրաստվելու հայր են ներկայացրել 130 դատավոր և 210 դատախազ**, ընդամենը՝ 340, որոնցից **339-ը բավարարել են** վերապատրաստված համարվելուն ներկայացվող պահանջին, այսինքն՝ մասնակցել են հեռաուսուցման համապատասխան դասընթացի առնվազն 80%-ին: **Մեկ դատախազ չի հաղթահարել** հեռաուսուցման դասընթացի մասնակցության 80 տոկոսանոց շեմը:

Հեռաուսուցմանն ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների մասնակցության աստիճանը եղել է բարձր: Դասընթացներին մասնակցած **130 դատավորների առնվազն 98%-ը** ապահովել է 40 ակադեմիական ժամ մասնակցություն: Միաժամանակ **210 դատախազների** պարագայում այդ ցուցանիշը **96% է**:

Դեպարտամենտի գործունեության վերաբերյալ ամփոփ ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում՝

Դասընթացներ	Հայտով ներկայացված		Ուսուցում անցած (%)	
	դատավոր	դատախազ	դատավոր	դատախազ
«Փաստարկում և հոետորիկա»	45	49	45	49
	Ընդամենը՝ 94		Ընդամենը՝ 94 (100,0%)	
«Փախստականների իրավունք»	39	21	39	20
	Ընդամենը՝ 60		Ընդամենը՝ 59 (98,3%)	
«Անչափահասի իրավունքների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում»	21	57	21	57
	Ընդամենը՝ 78		Ընդամենը՝ 78 (100,0%)	
«Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն»	25	83	25	83
	Ընդամենը՝ 108		Ընդամենը՝ 108 (100,0%)	
ԸՆԴԱՄԵՆԸ	130	210	130	209
	ԸՆԴՀԱՆՈՒՐ		339 (99,7%)	

VI. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

• Գրադարանն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- ✓ գրադարանի նոր՝ 2018թ. հավաքածուի կազմում, ցուցակագրում և հաշվառում,
- ✓ անձը հաստատող փաստաթղթի և գրանցամատյանի միջոցով ընթերցողների գրանցում և սպասարկում՝ գրադարանից օգտվելու կանոններին համապատասխան,
- ✓ գրականություն որոնելու կամ նյութերին իրազեկ լինելու գործում ունկնդիրներին օգնության ցուցաբերում:

• Համագործակցության և հանրային կապերի բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) *հայաստանյան, արցախյան, օտարերկրյա և միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում, մասնավորապես՝*

- ✓ Արցախի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի, Մոլդովայի Հանրապետության արդարադատության ազգային ինստիտուտի, ՌԴ դատախազության համալսարանի, Ռուսաստանի արդարադատության պետական համալսարանի, Բելառուսի պետական համալսարանի դատավորների, դատախազության, դատարանների և արդարադատության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման ինստիտուտի, Ուկրաինայի դատավորների ազգային դպրոցի հետ համագործակցության մասին համաձայնագրերի և հուշագրերի ստորագրում,
- ✓ Մոլդովայի Հանրապետության արդարադատության ազգային ինստիտուտի, Ռուսաստանի արդարադատության պետական համալսարանի, Բելառուսի պետական համալսարանի դատավորների, դատախազության, դատարանների և արդարադատության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման ինստիտուտի, Ուկրաինայի դատավորների ազգային դպրոցի պատվիրակությունների՝ Ակադեմիա այցելությունների կազմակերպում,

- ✓ գործընկեր կառույցների հրավերով, ինչպես նաև տարբեր ծրագրերի շրջանակում, Ակադեմիայի ներկայացուցիչների՝ Մոլդովա, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա այցելությունների կազմակերպում, որոնց ընթացքում ձեռք են բերվել նոր պայմանավորվածություններ, մշակվել են համագործակցության զարգացման նոր ուղիներ.

2) Ակադեմիայի գործունեության հրապարակայնության ապահովում, մասնավորապես՝

- ✓ հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ շարունակական համագործակցության ապահովում,
- ✓ Ակադեմիայի գործունեության վերաբերյալ Ակադեմիայի պաշտոնական կայքում ինը տասնյակից ավելի մամուլի հաղորդագրության հրապարակում (երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն), ինչպես նաև զուգահեռաբար դրանք հայաստանյան ՋԼՄ-ների և անձամբ լրագրողների էլեկտրոնային փոստի հասցեներին (մոտ 200) ուղարկում,
- ✓ հայաստանյան ՋԼՄ-ներում Ակադեմիայի մասին հրապարակված ու հեռարձակված նյութերի մշտադիտարկում և համապատասխան էլեկտրոնային նյութերի արխիվացում,
- ✓ Ակադեմիայում տեղի ունեցած և դրան վերաբերող միջոցառումների լուսա- և տեսանկարահանում և մոնտաժում, ինչը հնարավորություն է ստեղծում տարածել նաև մուլտիմեդիա նյութեր՝ ապահովելով գործունեության հրապարակայնության մարկարդակի բարձրացում և լսարանի շարունակական աճ,
- ✓ «Facebook», «Twitter», «Linkedin» սոցիալական ցանցերում, «Telegram» սոցիալական հարթակում, «Wikipedia» հանրամատչելի հանրագիտարանում, «Սփյուռ» տեղեկատվական համակարգում, «Արեգ» տեղեկատուում Ակադեմիայի ներկայացվածության ապահովում,
- ✓ Ակադեմիայի վարկանիշն ու հեղինակությունը, հրապարակվող տեղեկատվության դիտելիությունը բարձրացնելու ուղղությամբ հետևողական ամենօրյա աշխատանքի իրականացում.

3) այցերի, միջոցառումների կազմակերպում, մասնավորապես՝

- ✓ Ակադեմիայում անցկացվող միջոցառումների, հանդիպումների և տարբեր պատվիրակությունների, աշխատանքային խմբերի, հայաստանյան և միջազ-

գային գործընկերների, հյուրերի այցերի հետ կապված արարողակարգային հարցերի լուծում,

- ✓ Ակադեմիայի հիմնադրման 5-ամյակին նվիրված տոնական միջոցառումների կազմակերպման աշխատանքներին ակտիվ մասնակցություն.

4) հասարակայնության հետ կապերի զարգացում և ամրապնդում, մասնավորապես՝

- ✓ արտաքին հաղորդակցության ամենօրյա պատշաճ իրականացում, որի շրջանակում անպատասխան չի թողնվել ոչ մի հեռախոսազանգ և Ակադեմիայի info@justiceacademy.am և infojusticeacademy@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեներին, սոցիալական ցանցերում համապատասխան էջերի միջոցով ուղարկված և ոչ մի նամակ, տեղեկատվության հարցում.

5) ընթացիկ այլ աշխատանքներ, մասնավորապես՝

- ✓ համագործակցության և հանրային կապերի ոլորտում ընթացիկ այլ աշխատանքների իրականացում,
- ✓ Ակադեմիայի ղեկավարության հանձնարարությունների կատարում:

• Անձնակազմի և փաստաթղթաշրջանառության բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- ✓ 240 աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմանագրերի կազմում և ստորագրման ապահովում,
- ✓ 230 հրամանների, այդ թվում՝ աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, արձակուրդի, խրախուսանքի և այլ ընթացիկ հրամանների նախագծերի կազմում,
- ✓ աշխատակիցների կազմի, նրանց աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու վերաբերյալ տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի վարում,
- ✓ սոցիալական փաթեթին առնչվող անհրաժեշտ աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- ✓ փաստաթղթաշրջանառության պատշաճ ապահովում՝ փաստաթղթերի մուտքագրում (940) և ելքագրում (470), դրանց պատճենահանում և հասցեատերերին հանձնում,

- ✓ յուրաքանչյուր ամսվա վերջում Ակադեմիայի աշխատակիցների աշխատածամերի հաշվարկի վերաբերյալ տեղեկագրերի կազմում,
- ✓ ըստ անհրաժեշտության տեղեկանքների կազմում, Ակադեմիայի ղեկավարությանը և կառուցվածքային այլ ստորաբաժանումներին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում և ընթացիկ այլ աշխատանքների իրականացում:

• Համակարգչային մասնագետն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- ✓ Ռեկտորի և Աշխատակազմի ղեկավարի անմիջական հանձնարարությունների կատարում,
- ✓ համակարգիչների, սերվերների և հարակից սարքերի (տպիչներ, սկաներներ, անվտանգության տեսախցիկներ և այլն), լոկալ, WIFI և INTERNET ցանցերի, ինչպես նաև «Հոսթինգ» ծառայության («ABC դոմեն» ընկերության հետ համատեղ), էլեկտրոնային անցակետային համակարգի և հեռախոսային ցանցի ընթացիկ սպասարկում և թերությունների վերացում,
- ✓ հակավիրուսային և այլ ծրագրերի միջոցով համակարգիչների, լոկալ, WIFI և INTERNET ցանցերի անվտանգության ապահովում,
- ✓ աշխատակիցների, վերապատրաստվողների և դատավորների թեկնածուների հավակնորդների, դատախազների ու քննիչների թեկնածուների ներկայության վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում (ամփոփ, օրական և շաբթի տեսքով),
- ✓ գրավոր և բանավոր քնությունների տեսաձայնագրում և DVD սկավառակների վրա պահպանում,
- ✓ պաշտոնական ձևաթղթերի, աշխատակիցների վկայականների, պատվոգրերի, շնորհակալագրերի և դատավորի, դատախազի, քննիչի թեկնածուների ավարտական դիպլոմների պատրաստում և տպագրում,
- ✓ ընթացիկ այլ աշխատանքներ:

• Տեխնիկատնտեսական բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- ✓ վերանորոգվել են երեք աշխատասենյակներ, առաջին հարկի միջանցքային տարածքները, ինչպես նաև երկու լսարաններ,

- ✓ Ակադեմիայի բակային տարածքում գտնվող պուրակի երեք կողմերում տեղադրված եզրաքարերը ամբողջովին ապամոնտաժվել են և փոխարինվել նորերով՝ 40 գ.մ. երկարությամբ,
- ✓ ապամոնտաժված եզրաքարերը տեղադրվել են կադաստրային սահմանից դուրս գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ճամեզրին, իսկ հարակից տարածքը բարեկարգվել է և վերածվել կանաչ գոտու,
- ✓ վերանորոգվել և համապատասխան գույներով ներկվել են Ակադեմիայի տարածքում տեղադրված նստարաններն ու աղբարկղերը, իսկ մաքրման աշխատանքներից հետո ներկվել են նաև սահմանային եզրաքարերը,
- ✓ բաժնի աշխատակիցներն ակտիվորեն մասնակցել են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ Ակադեմիայի Ի և Գ լսարանների վերանորոգման, վերազինման և կահավորման աշխատանքներին,
- ✓ կապիտալ վերանորոգվել են հյուրանոցային համալիր թվով 8 սենյակների լոգարանային հատվածների սարքավորումները,
- ✓ ամենօրյա միջոցառումների շնորհիվ ապահովվել է ինժեներական բոլոր հանգույցների անխափան աշխատանքը:

VII. ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի հաշվապահական հաշվառումն իրականացվել է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթներին և դրանից բխող իրավական ակտերին համապատասխան, ինչպես նաև՝ 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային օրենսգրքի համաձայն:

ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 51-Ա հանձնարարագրի համաձայն՝ Ակադեմիայում իրականացվել է ՀՀ պետական բյուջեից, հանրապետական նպատակային հատուկ ֆոնդերից և պետական այլ աղբյուրներից գումարների հատկացման և ծախսման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում կազմված համապատասխան ակտով արձանագրվել է, որ. «Ստուգվող ժամանակահատվածում Ակադեմիայի կողմից ապրանքանյութական արժեքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Կատարված ֆինանսական գործարքների ճշտության ստուգմամբ խախտումներ չեն հայտնաբերվել և ներկայացվել են որոշ առաջարկություններ:

Իրականացվել է նաև 2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմված ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ: Անկախ աուդիտի եզրակացությամբ տրվել է կարծիք, ըստ որի՝ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին ստանդարտի համաձայն և բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ակադեմիայի ֆինանսական արդյունքները:

1. Եկամուտներ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի նախահաշվով նախատեսվել են եկամուտների հետևյալ աղբյուրները՝

- 1) վերադաս մարմնի կողմից, դրամաշնորհի ձևով ստացվող եկամուտներ՝ **230 միլիոն 965 հազար դրամ**՝ «վերապատրաստման ծառայություններ» ծրագրով,
- 2) «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրով՝ **76 միլիոն վեց հարյուր վաթսուինը հազար 5 հարյուր դրամ**,

3) «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ և ՀՀ քննչական կոմիտեի միջև 22.02.2018թ. կնքված «Վերապատրաստման, մասնագիտական պատրաստման և հատուկ ուսուցման ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ «ՀՀՔԿԴ-ՄԱԾՁԲ-18/1» պայմանագրի շրջանակերում՝ **17 միլիոն 308 հազար 2 հարյուր դրամ,**

4) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ միջև 18.10.2018թ. կնքված թիվ N ՄԻՊԱ-ԾՁԲ-21 պայմանագրի շրջանակներում՝ **504 հազար դրամ,**

5) ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ միջև 16.03.2018թ. կնքված թիվ N ՀԲԾ-ՄԱՎԾՁԲ-18/1 պայմանագրի շրջանակներում՝ **276 հազար դրամ:**

Հունվարից դեկտեմբեր ամիսների ընթացքում բանկային **տոկոսներից** հաշվեգրված եկամուտը կազմել է **260 հազար 3 հարյուր դրամ:**

2. Ծախսեր

2018 թվականին Ակադեմիայի եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսվել են ծախսերի հետևյալ ուղղությունները.

հազ. դրամ

	ԾԱԽՍԵՐ	350171,1
	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	350171,1
1.	Աշխատանքի վարձատրություն	172083,2
1.1.	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	156775,0
1.2.	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ	15308,2
2.	Կրթաթոշակ	76669,5
3.	Պայմանագրային ծառայություններ, վերապատրաստման ծախսեր	41242,4
3.1.	Քննությունների ստուգման և գնահատման ծառայություններ	9260,0
3.2.	Բանկային ծառայությունների ծախսեր	80,0
3.3.	Էներգետիկ ծառայություններ	4800,0
3.4.	Ջեռուցման ծառայություններ	3770,0
3.5.	Զրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	1720,1
3.6.	Հեռախոսակապի ծառայություններ	408,1
3.7.	Փոստային կապի ծառայություններ	250,0
3.8.	Ինտերնետ ցանի մուտքի ապահովման ծառայություններ	670,8

3.9.	Ապահովագրական ծախսեր	72,0
3.10.	Վերապատրաստվողների սննդի և տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	10410,4
3.11.	Դատական կարգադրիչների, դատախազների, դատավորների և քննիչների հատուկ ուսուցման, ուղևորափոխադրման ծառայություններ ծառայություններ	8240,0
3.12.	Մասնագիտական ծառայություններ՝ այդ թվում ջեռուցման կայանների վերանորոգման և տեխնիկական սպասարկման, կաթսայի տեխնիկական անվտանգության և փորձաքննության ծառայություններ	521,0
3.13.	Այլ նյութերի տպագրություն	500,0
3.14.	Անկախ աուդիտորական ծառայություն	540,0
4.	Ներկայացուցչական ծախսեր	4400,0
5.	Գործուղումներ	2500,0
6.	Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	5333,0
6.1.	Պահնորդական ծառայություն	5333,0
7.	Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	3598,0
7.1.	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	600,0
7.2.	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	1650,0
7.3.	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	1348,0
8.	Ընդհանուր բնույթի այլ ծախսեր	799,0
9.	Նյութեր	3020,0
9.1.	Գրասենյակային նյութեր	400,0
9.2.	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	700,0
9.3.	Տրանսպորտային նյութեր	1920,0
10.	Հարկեր, այլ պարտադիր վճարներ և տույժեր	40525,9
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	350171,1

Ակադեմիայի 2018 թվականի բյուջեի կադարողական ցուցանիշները կամփոփվեն և կներկայացվեն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ օրենքվ սահմանված ժամկետներում:

VIII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ


Հաշվետրու ժամանակահատվածում Ակադեմիայում աշխատանքներ են իրականացվել նաև հետևյալ ուղղություններով՝

- 1) Ակադեմիան ՀՀ արդարադատության խորհրդի կողմից հերթական անգամ ընտրվել է որպես դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գրավոր քննության համար քննական հարցերի մշակման պատասխանատու կազմակերպություն.
- 2) ուսուցման գործընթացը և աշխատանքային պայմանները բարելավելու նպատակով ձեռք են բերվել համակարգչային անհրաժեշտ սարքավորումներ՝ համակարգիչներ (այդ թվում՝ դյուրակիր), տպիչներ (այդ թվում՝ գունավոր), պրոյեկտորներ, ինչպես նաև համակարգչային սեղաններ՝ բազկաթոռներով.
- 3) հակահրդեհային անվտանգության առավել արդյունավետ ապահովման նպատակով ամբողջությամբ նորոգվել և գործարկվել են Ակադեմիայի շենքում տեղադրված հակահրդեհային ազդանշանային սարքերը.
- 4) իրականացվել է նաև Ակադեմիայում ավանդույթ դարձած ծառատունկ՝ վարչական շենքի բակային և հարակից հատվածներում.
- 5) Ակադեմիայի որջ գործունեության ընթացքում ձևավորված փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու, մշտական պահպանության կամ ոչնչացման համար դրանց ընտրությունը կազմակերպելու և իրականացնելու նպատակով ստեղծվել է Ռեկտորին կից փորձագիտական հանձնաժողով, որի կողմից՝
 - ✓ մշակվել են այդ գործընթացի համար անհրաժեշտ փաստաթղթերի նմուշային օրինակներ,
 - ✓ գործող իրավական ակտերի համաձայն, իրականացվել է Ակադեմիայում առկա համապատասխան փաստաթղթերի արխիվացումը.
- 6) ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ իրականացվել է լայնածավալ ծրագիր, որի շրջանակում ամբողջությամբ նորոգվել, կահավորվել ու գերժամանակակից տեխնիկայով համալրվել է Ակադեմիայի լսարաններից մեկը, որը ծառայելու է որպես քննասենյակ, ինչպես նաև տարատեսակ միջոցառումների

անցկացման հարմարավետ վայր՝ համաժամանակյա թարգամանություն ապահովելու բոլոր հնարավորություններով.

- 7) ասֆալտապատվել է Փիրումյանների փողոցից դեպի ակադեմիայի տարածք մտնող նախկինում լրջորեն քայքայված ճանապարհը՝ 250 քմ. մակերեսով:

Ռեկտոր



Ս.Վ. Առաքեյան